



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 18 ՍԵՄՏԵՄԲԵՐ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՐԼՐ Ինձ Իմաստութիւն Վբարիս Խորհել եւ Խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի Հար Խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ Ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 135

ՏԻՐՈՋ ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻԻՆ

Օրհնութիւն երգեցէք Տիրոջ:

Օրհնեգեցէք Տիրոջ անունը,

օրհնութիւն երգեցէք Տիրոջ, ով իրեն ծառայողներ,

դուք՝ որ աղօթքի կանգնած էք Տիրոջ Տան մէջ:

Օրհնութիւն երգեցէք Տիրոջ, որովհետեւ բարի է Տէրը.

ներբող երեցէք իր անունին, որովհետեւ քաղցր է ան:

Արդարեւ Տէրը Յակոբին սերունդները ընտրեց իրեն համար,

Իսրայէլին որդիները ընտրեց որպէս իրեն սեփականութիւն:

Ես գիտեմ՝ թէ մեծ է Տէրը.

մեր Տէրը մեծ է բոլոր աստուածներէն:

Կէրը ինչ որ կամենայ՝ կը կատարէ,

երկինքի մէջ թէ երկրի վրայ,

ծովերուն մէջ թէ անոնց խոր յաբակին:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՐԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

2:1-12

ԿԵՆՆԱՆԻ ՎԷՍԸ ԵՒ ՍՐԲՈՒԿՑ ԱԶԳԸ (2:1-10)

«Մէկդի դրէք եւ որպէս հաւաքքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ անխարդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք» (1-2 հմր): Նորածին մանուկի կը նմանի հաւաքացեալը, երբ հոգեւոր ծնունդ կունենայ, ուստի կաթով պէք է սնանի որպէսզի աճի: Որովհետեւ նորածին է, ուրեմն փակաւին արամներ չունի կարծր ուրելիք ուրելու, անոր միակ սնունդ կաթն է: Նորածին հաւաքացեալն ալ նոյնն է, փակաւին կարծր ուրելիք ուրելու պարտաւոր չէ, չնայած Պօղոս Առաքեալ կը պարտաւորէ, որ աճին, միայն կաթով չսնանին: Պետրոս Առաքեալն ալ նոյնը կը թելադրէ կաթով սնանեցէք որպէսզի աճիք, եւ ոչ միայն աճիք, այլ աճելով հասնիք փրկութեան: Բայց զգոյշ, ի՞նչպիսի կաթով պէք է սնանիլ: Աստուծոյ կողմէ փրկուած անխարդախ կաթով, այսինքն՝ Աստուծոյ խօսքով, բայց այդ խօսքով չխեղաթիրուած, չայլափոխուած: Որովհետեւ եղան ու փակաւին կան պարագաներ, որ այդ խօսքը կը խեղաթիրեն, կ'այլափոխեն:

«Մօտեցէք անոր, Քրիստոսի, այն կենդանի վեմին» (4 հմր): Մէկդի դրէք, հեռացէք, ճաշակեցէք, մօտեցէք, որպէսզի կառուցուիք Քրիստոսի վեմին վրայ, որպէս կենդանի քարեր, անբաշ քարեր, բայց կենդանի քարեր, որոնք կը խօսին, կը րեսնեն, կը լսեն, կը քալեն, կը վկայեն, դառնալու համար հոգեւոր փաճար, եւ ոչ թէ քարեղէն փաճար:

Հին Կրակարանէն զիտենք, թէ Աստուծոյ պարտաւորեց Մովսէսին շինելու վկայութեան Խորան մը, որպէսզի այնպէս հանդիպի Իր ժողովուրդին հետ: Վկայութեան Խորան, անոր մէջ գոհասեղան եւ քահանաներու դաս, որպէսզի Իրեն պաշտամունք ընծայեն: Հեղափոխականօրէն, Ղեւիի ցեղը պիտի ըլլար քահանաներու դասը, որուն ժառանգութիւնը Տէրը Ինքն էր, այսինքն՝ իրենք ժառանգութեան բաժին չունէին: Միւս կողմէ, իրենց պարտականութիւնն էր փաճարին մէջ պաշտամունքի ընելու, արարողութիւններ կատարելու եւ զոհեր ընծայելու Աստուծոյ: Մակայն, այս բոլորը նախապարտաւորական աշխարհներ էին, որովհետեւ պիտի գար ժամանակ, որ ոչ միայն Ղեւիի ցեղը, այլ՝ Աստուծոյ նոր ժողովուրդը ամբողջութեամբ ընծայուելու Աստուծոյ, ըլլալու անարար քահանաներ եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ հոգեւոր ընդունելի պարարագ մարտնչանելու Աստուծոյ: Ի՞նչ է մեր ընծայելիք պարարագը: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ձեր հոգիները ընծայեցէք Աստուծոյ գոհասեղանին» (Հռոմ 12:1): Այդ բոլորը կ'ընենք Քրիստոսի միջոցաւ: Այն Քրիստոսի, որ եղաւ ընտրուած վեմ, պարտական անկիւնաքար, որուն հաւաքացողը յուսախաբ չըլլար բնաւ, նաեւ եղաւ գործումի ու գայթակղութեան առիթ, անոնց համար, որոնք չհաւաքացին Իրեն (6-8 հմր):

«Դուք ընտրուած ցեղ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սուրբ ազգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը» (9 հմր): Այն ինչ, որ Հին Կրակարանին մէջ, Աստուծոյ ծրագիրն էր Իրեն համար պարտաւորելու սեփական ժողովուրդ մը, ըլլալու անոնց Աստուծոյ, եւ իրենց Իր ժողովուրդը: Բայց Իսրայէլը չկրցաւ իրականացնել այդ ծրագիրը: Ահա Աստուծոյ աշխարհը դրկելով Իր Միածինը՝ Յիսուս Քրիստոսը, որպէսզի Անով իրականացէր այդ ծրագիրը: Ահա Քրիստոսի միացածները ընտրուած ցեղ են, սուրբ ազգ են, կոչուախ են Աստուծոյ սեփական ժողովուրդը ըլլալու, որպէս քահանաներ, այսինքն՝ մնայուն Աստուծոյ պաշտամունքի նուիրուած, ծառայութեան փրամադրուած, Անոր կամքին համաձայն ասպրող ժողովուրդ: Որուն կոչումն ու պարտականութիւնն է. «**քարոզել գործութիւնը անոր՝ որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց**» (9 հմր): Անցեալին Իսրայէլ նոյն այս պարտականութիւնը ունէր քարոզելու եւ վկայելու Աստուծոյ մասին, որ զիրենք Եգիպտոսի խաւարէն Իր սքանչելի լոյսին կանչեց: Անոնք, սակայն, փոխանակ քարոզելու ու վկայելու Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին, ընդհակառակը, անոնք փրփրաւորեցին, դժգոհեցան: Առաքեալը կը յիցենէ, որպէս Աստուծոյ ժողովուրդ, Աստուծոյ ողորմութիւնն է որ կը վայելեն (10 հմր), մինչ նախապէս չէին վայելեր, այլ՝ դարապարտութիւն:

ՀԵԹԱՆՈՍՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԱՊՐԻԼ ԻԲՐԵԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌԱՅ (2:11-12)

Պեքրոս Առաքեալ աղաչելով կը խնդրէ, որ հաւաքացեալները այս աշխարհը մէջ պանդուխտներ են եւ օտարականներ: Պանդուխտներ են, որովհետեւ հոս մնայուն կայք չունին, այլ՝ իրենց վերջնական կայանը յաիպենական կեանքն է, երկինքի արքայութիւնը: Միեւնոյն ժամանակ, օտարական են, որովհետեւ այս աշխարհին չեն պատկանիր, այլ՝ Աստուծոյ, որովհետեւ Աստուծոյ սեփական ժողովուրդն են: Ուստի իբրեւ այդպիսին, Պեքրոս Առաքեալ աղաչելով կը խնդրէ, որ իբրեւ հաւաքացեալներ այս կեանքը ապրին հեռու մնալով մարմնական ցանկութիւններէն, որոնք հոգիին դէմ կը պատերազմին, այդ ձեռով պարկեշտ կեանք մը ապրելու, իբրեւ օրինակ հեթանոսներուն, որպէսզի անոնք երբ հաւաքացեալներու բարի գործերը կը տեսնեն, փառաւորեն զԱստուած Իր Գալստեան Օրը, այսինքն՝ մի գուցէ անոնց համար ըլլայ փրկութեան առիթ:

